ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
<< ԱԶԱՏԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ

2603 ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք
բնակավայր Ազատան փող. 19, շենք 17

094121412

Էլ. հասցե azatan@schools.am

24.01.2024թվ.

Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք,
բնակավայր Ազատան փ. 19 շենք 17
Էլ. հասցե՝ azatanidproc@gmail.com

«Տիրուհի Սիրեկանյան» ԱՁ
Հասցե՝ Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի
Ազատամարտիկների 6/3
Էլ. Փոստ՝ tiruhi.sirekanyan@list.ru

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետը և ուսումնասիրելով ՀՀ Շիրակի մարզի «Ազատանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Տիրուհի Սիրեկանյան» ԱՁ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 01.08.2023թ. կնքված **«ՇՄԱՄԴ-ԳՀԱՊՁԲ-2023/2»** ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ ստորև ներկայացնում եմ նշված պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ՀՀ Շիրակի մարզի «Ազատանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի որոշումը:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը (տվյալ դեպքում՝ «Տիրուհի Սիրեկանյան» ԱՁ-ն) պարտավորվում է ՀՀ Շիրակի մարզի «Ազատանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ի կարիքների համար նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1

հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված գազօջախի և էլեկտրական սալօջախի (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել կնքված Պայմնագրի ուժի մեջ մտնելուց մինչև սեպտեմբերի 11-ը, սակայն մինչ օրս այն չի մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 7օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ չիրականացնելով պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարումը, ուստի ՀՀ Շիրակի մարզի «Ազատանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը՝ հիմք ընդունելով վերը նշված իրավական հիմքերը, միակողմանի հրաժարվում է 01.08.2023թ. Ընկերության հետ կնքված **«ՇՄԱՄԴ-ԳՀԱՊՁԲ-2023/2»** ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրից՝ համարելով այն ամբողջությամբ լուծված:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում, **«ՇՄԱՄԴ-ԳՀԱՊՁԲ-2023/2»** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.13 կետի համաձայն՝ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները 75000 (յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ և 50000(հիսուն հազար) ՀՀ դրամգանձապետական հաշվեհամարին փոխանցելու համար:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն ծանուցմամբ Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն հրապարակվում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

Հարգանքով՝

«Ազատանի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ -ի տնօրեն Հ. Ոսկանյան